



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

21st March 2021

Bulletin 12/2021

Sixth Sunday of Great Lent—Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:8-3:17

Չգուշացէ՛ք որ ո՛չ մէկը որսայ ձեզ փիլիսոփայութեամբ եւ ունայն խաբէութեամբ, մարդոց աւանդութեան ու աշխարհի սկզբունքներուն համաձայն, եւ ո՛չ թէ Քրիստոսի վարդապետութեան համաձայն. որովհետեւ Աստուածութեան ամբողջ լիութիւնը կը բնակի անոր մէջ մարմնապէս, ու դուք ալ ամբողջացած էք անով՝ որ գլուխն է ամեն պետութեան եւ իշխանութեան: Անո՛վ ալ թլփատուեցաք՝ անձեռակերտ թլփատութեամբ, մերկանալով մեղքերու մարմինէն՝ Քրիստոսի թլփատութեամբ: Անոր հետ թաղուեցաք մկրտութեամբ, նաեւ անով եւ անոր հետ յարութիւն առիք՝ հաւատալով Աստուծոյ ներգործութեան, որ մեռելներէն յարուցանեց զայն, եւ ձեզի՛ ալ՝ որ ժամանակին մեռած էիք յանցանքներու մէջ ու ձեր մարմինին անթլփատութեան մէջ՝ կեանք տուաւ անոր հետ: Մեր բոլոր յանցանքները ներեց մեզի, եւ մեզի դէմ հրամաններով եղած պարտամտութիւնը՝ որ հակառակ էր մեզի՝ ջնջեց, ու մէջտեղէն վերցուց զայն՝ զամէլով խաչափայտին վրայ. եւ մերկացուց պետութիւններն ու իշխանութիւնները, եւ հանրութեան նշաւակ դարձուց՝ անով յաղթելով անոնց:

Ուրեմն ա՛լ ո՛չ մէկը թող դատէ ձեզ կերակուրի կամ խմելիքի համար, կամ տօներու, ամսագլուխներու կամ Ծաբաթներու կապակցութեամբ, որոնք զալիք բաներուն շուքն են. բայց մարմինը Քրիստոսի է: Ո՛չ մէկը ձեզ թող գրկէ ձեր մրցանակէն՝ յօժարակամ խոնարհութեամբ ու հրեշտակներու կրօնով, միջամուխ ըլլալով չտեսած բաներուն, զուր տեղը հպարտանալով իր մարմնաւոր միտքով, եւ չքննելով գլուխը՝ որմէ ամբողջ մարմինը, յօդերով ու յօդակապերով հայրայթուած եւ իրարու կցուած, կ'աճի Աստուծոյ աճումով:

Ուրեմն, եթէ դուք մեռաք Քրիստոսի հետ՝ այս աշխարհի սկզբունքներուն հանդէպ, ա՛լ ինչո՞ւ՝ աշխարհի մէջ ապրողներու նման՝ ենթակա կ'ըլլաք հրամաններու, ինչպէս՝ «մի՛ մերձենար, մի՛ համտեսեր, մի՛ դպչիր», (ասոնք՝ բոլորը գործածութեամբ սահմանուած են ապականութեան,) մարդոց պատուերներուն ու վարդապետութիւններուն համաձայն: Ասոնք արդարեւ իմաստութեան կերպարանք մը ունին՝ ինքնակամ կրօնով, խոնարհութեամբ եւ մարմինին չխնայելով. բայց արժանի են ո՛չ մէկ պատիւի, հապա կը ծառայեն մարմինը գոհացնելու:

Ուրեմն, եթէ յարութիւն առիք Քրիստոսի հետ, փնտռեցէ՛ք այն բաները՝ որ վերն են, ուր Քրիստոս կը բազմի՝ Աստուծոյ աջ կողմը: Մտածեցէ՛ք վերի բաներուն մասին, ո՛չ թէ երկրի վրայ եղող բաներուն մասին. որովհետեւ դուք մեռաք, ու ձեր կեանքը պահուած է Քրիստոսի հետ՝ Աստուծոյ մէջ: Երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ երեւնայ, այն ատեն դո՛ւք ալ փառքով պիտի երեւնաք՝ անոր հետ:

Ուրեմն մեռցուցէ՛ք ձեր երկրաւոր անդամները.- պոռնկութիւնը, անմաքրութիւնը, անսանձ կիրքը, չար ցանկութիւնը եւ ագահութիւնը, որ կռապաշտութիւն է: Ասո՛նց համար Աստուծոյ բարկութիւնը կու գայ անհնազանդութեան որդիներուն վրայ, որոնց մէջ դո՛ւք ալ ժամանակին կ'ընթանայիք, երբ կ'ապրէիք անոնց մէջ: Բայց հիմա դո՛ւք ալ թօթափեցէ՛ք սա՛ ամէնը.- բարկութիւնը, զայրոյթը, չարամտութիւնը, հայիոյութիւնը, լիբէ խօսքերը՝ ձեր բերանէն: Մի՛ ստէք իրարու. հանեցէ՛ք ձեր վրայէն հին մարդը՝ իր գործերով, ու հագէ՛ք այն նորը, որ նորոգուած է գիտակցութեամբ՝ իր Արարիչին պատկերին համաձայն, եւ որուն մէջ ո՛չ Յոյն կայ, ո՛չ ալ Հրեայ,

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

թվատուրիւն կամ անթվատուրիւն, օտար, Սկիւթացի, ստրուկ կամ ազատ. հապա Քրիստոս է ամէն ինչ, եւ բոլորին մէջ:

Ուրեմն, որպէս Աստուծոյ ընտրեալներ՝ սուրբ ու սիրելի, հազէ՛ք գուրք, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերատարութիւնը, հանդուրժելով իրարու եւ ներելով իրարու՝ եթէ մէկը տրտունջ մը ունենայ միւսին դէմ. ինչպէս Քրիստոս ներեց ձեզի, նոյնպէս ալ դո՛ւք ներեցէ՛ք: Եւ այս բոլոր բաներուն վրայ՝ հազէ՛ք սերը, որ կատարելութեան կապն է: Ձեր սիրտերուն մէջ թող հովանաւորէ Աստուծոյ խաղաղութիւնը, որուն ալ կանչուեցաք՝ մէկ մարմինով, ու շնորհակա՛լ եղէք: Քրիստոսի խօսքը ճիշդութեամբ թող բնակի ձեր մէջ, որպէսզի ամբողջ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ խրատէք զիրար՝ սաղմոսներով, օրհներգերով ու հոգեւոր երգերով, շնորհակալութեամբ երգելով Աստուծոյ՝ ձեր սիրտերուն մէջ: Եւ ամէն ինչ որ կ'ընէք, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, ըրէ՛ք Տէր Յիսուսի անունով, շնորհակալ ըլլալով Աստուծոյն ու Հօրմէն՝ անոր միջոցով:

The Epistle of St Paul to the Colossians 2:8-3:17;

See to it that no one takes you captive through hollow and deceptive philosophy, which depends on human tradition and the elemental spiritual forces ^a of this world rather than on Christ.

For in Christ all the fullness of the Deity lives in bodily form, and in Christ you have been brought to fullness. He is the head over every power and authority. In him you were also circumcised with a circumcision not performed by human hands. Your whole self ruled by the flesh ^b was put off when you were circumcised by ^c Christ, having been buried with him in baptism, in which you were also raised with him through your faith in the working of God, who raised him from the dead.

When you were dead in your sins and in the uncircumcision of your flesh, God made you ^d alive with Christ. He forgave us all our sins, having cancelled the charge of our legal indebtedness, which stood against us and condemned us; he has taken it away, nailing it to the cross. And having disarmed the powers and authorities, he made a public spectacle of them, triumphing over them by the cross. ^e

Freedom From Human Rules

Therefore do not let anyone judge you by what you eat or drink, or with regard to a religious festival, a New Moon celebration or a Sabbath day. These are a shadow of the things that were to come; the reality, however, is found in Christ. Do not let anyone who delights in false humility and the worship of angels disqualify you. Such a person also goes into great detail about what they have seen; they are puffed up with idle notions by their unspiritual mind. They have lost connection with the head, from whom the whole body, supported and held together by its ligaments and sinews, grows as God causes it to grow.

Since you died with Christ to the elemental spiritual forces of this world, why, as though you still belonged to the world, do you submit to its rules: “Do not handle! Do not taste! Do not touch!”? These rules, which have to do with things that are all destined to perish with use, are based on merely human commands and teachings. Such regulations indeed have an appearance of wisdom, with their self-imposed worship, their false humility and their harsh treatment of the body, but they lack any value in restraining sensual indulgence.

Living as Those Made Alive in Christ

Since, then, you have been raised with Christ, set your hearts on things above, where Christ is, seated at the right hand of God. Set your minds on things above, not on earthly things. For you died, and your life is now hidden with Christ in God. When Christ, who is your ^a life, appears, then you also will appear with him in glory.

Put to death, therefore, whatever belongs to your earthly nature: sexual immorality, impurity, lust, evil desires and greed, which is idolatry. Because of these, the wrath of God is coming. ^b You used to walk in these ways, in the life you once lived. But now you must also rid yourselves of all such things as these: anger, rage, malice, slander, and filthy language from your lips. Do not lie to each other, since you have taken off your old self with its practices and have put on the new self, which is being renewed in knowledge in the image of its Creator. Here there is no Gentile or Jew, circumcised or uncircumcised, barbarian, Scythian, slave or free, but Christ is all, and is in all.

Therefore, as God's chosen people, holy and dearly loved, clothe yourselves with compassion, kindness, humility, gentleness and patience. Bear with each other and forgive one another if any of you has a grievance against someone. Forgive as the Lord forgave you. And over all these virtues put on love, which binds them all together in perfect unity.

Let the peace of Christ rule in your hearts, since as members of one body you were called to peace. And be thankful. Let the message of Christ dwell among you richly as you teach and admonish one another with all wisdom through psalms, hymns, and songs from the Spirit, singing to God with gratitude in your hearts. And whatever you do, whether in word or deed, do it all in the name of the Lord Jesus, giving thanks to God the Father through him.

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 22:34-23:39

Բայց Փարիսեցիները՝ երբ լսեցին թե՛ ան պապանձեցուց Մաղուկեցիները, տեղ մը հաւաքուեցան, եւ անոնցմէ օրինական մը հարցուց՝ զայն փորձելով. «Վարդապետ, ո՞ր պատուիրանը մեծ է Օրէնքին մէջ»: Յիսուս ըսաւ անոր. «“Միրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ միտքովդ”: Այս է առաջին ու մեծ պատուիրանը: Եւ երկրորդը՝ ասոր նման. “Միրէ՛ ընկերդ քու անձիդ՝ պէս”: Այս երկու պատուիրաններէն կախուած են ամբողջ Օրէնքն ու Մարգարէները»:

Երբ Փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Քրիստոսի մասին ի՞նչ է ձեր կարծիքը. որո՞ւ որդին է»: Ըսին իրեն. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Հապա ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զայն Տէր կը կոչէ ու կ'ըսէ.

“Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեն ոտքերուդ»”:

Ուրեմն եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ի՞նչպէս ան իր որդին կ'ըլլայ»: Ո՛չ մէկը կրնար խօսքով մը պատասխանել անոր: Այդ օրէն ետք՝ ո՛չ մէկը կը յանդգնէր բան մը հարցնել անոր:

Այն ատեն Յիսուս խօսեցաւ բազմութեան եւ իր աշակերտներուն՝ ըսելով. «Դպիրներն ու Փարիսեցիները բազմած են Մովսէսի աթոռին վրայ: Ուրեմն ինչ որ ըսեն ձեզի՝ որ պահէք, պահեցէ՛ք եւ ըրէ՛ք. բայց մի՛ ընէք անոնց գործերուն պէս, որովհետեւ կ'ըսեն՝ սակայն չեն ըներ: Արդարեւ ծանր ու դժուարակիր բեռներ կը կապեն եւ կը դնեն մարդոց ուսերուն վրայ, ու իրենց մատո՛վ իսկ չեն ուզեր շարժել զանոնք: Իրենց բոլոր գործերը կ'ընեն մարդոցմէ տեսնուելու համար. կը լայնցնեն իրենց գրապանակները եւ կ'երկնցնեն իրենց հանդերձներուն քղանցքները. կը սիրեն առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ, առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, բարեւները՝ հրապարակներու վրայ, ու “ռաբբի՛, ռաբբի՛” կոչուիլ մարդոցմէ: Բայց դուք մի՛ կոչուիք “ռաբբի”, որովհետեւ մէկ է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոս, եւ դուք բոլորդ եղբայր էք: Ու երկրի վրայ ո՛չ մէկը կոչեցէ՛ք ձեր “հայրը”, որովհետեւ մէկ է ձեր Հայրը՝ որ երկինքն է: Եւ դուք մի՛ կոչուիք “ուսուցիչ”, որովհետեւ մէկ է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոս: Ու ձեր մէջէն մեծագոյնը՝ ձեր սպասարկո՛ւն թող ըլլայ: Ո՛վ որ բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ»:

«Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը զոցէք երկինքի թագաւորութիւնը մարդոց առջեւ. դո՛ւք չէք մտնէր, ու մտնողներուն ալ թոյլ չէք տար՝ որ մտնեն: Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը լափէք այրիներուն տունները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կ'երկարէք. ուստի աւելի՛ խստութեամբ պիտի դատուիք»:

Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը շրջիք ծով ու ցամաք՝ մէկը նորահաւատ ընելու, եւ երբ ըլլայ՝ զայն ձեզմէ երկու անգամ աւելի գեհենի որդի կ'ընէք:

Վա՛յ ձեզի, կո՛յր առաջնորդներ, որ կ'ըսէք. “Ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ տաճարի ոսկիին վրայ՝ պարտաւոր կ'ըլլայ”: Յիմարներն ու կոյրեր, ո՞րը մեծ է, ոսկի՞ն՝ թէ տաճա՛րը, որ կը սրբացնէ ոսկին: Նաեւ կ'ըսէք. “Ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ՝ բան մը չէ, բայց ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայի ընծայի՛ն վրայ՝ պարտաւոր կ'ըլլայ”: Յիմարներն ու կոյրեր, ո՞րը մեծ է, ընծա՞ն՝ թէ զոհասեղանը, որ կը սրբացնէ ընծան: Ուրեմն, ո՛վ որ երդում կ'ընէ զոհասեղանին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր վրայ եղած բոլոր բաներուն վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ տաճարին վրայ, երդում կ'ընէ անոր վրայ ու անոր մէջ բնակողին վրայ: Եւ ո՛վ որ երդում կ'ընէ երկինքի վրայ, երդում կ'ընէ Աստուծոյ գահին վրայ ու անոր վրայ բազմողին վրայ:

Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը վճարէք անանուխին, սամիթին ու չամանին տասանորդը, բայց կը թողուք Օրէնքին աւելի ծանր բաները՝ իրաւունքը, կարեկցութիւնն ու հաւատքը. ասո՛նք պէտք է ընէիք, եւ զանոնք չձգէիք: Կո՛յր առաջնորդներ, որ կը քամէք մօղուկը ու կը կլլէք ուղտը:

Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը մաքրէք գաւաթին ու պնակին դուրսի՛ կողմը, բայց ներսէն լեցուն են յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ: Կո՛յր Փարիսեցի, նախ մաքրէ՛ գաւաթին ու պնակին ներսի՛ կողմը, որպէսզի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ:

Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ եւ Փարիսեցիներ, որ կը նմանիք ծեփուած գերեզմաններու, որոնք արդարեւ դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, բայց ներսէն լեցուն են մեռելներու ոսկորներով ու ամէն տեսակ անմաքրութեամբ: Նոյնպէս դուք դուրսէն արդար կ'երեւնաք մարդոց, իսկ ներսէն լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ»:

«Վա՛յ ձեզի, կեղծաւո՛ր դպիրներ ու Փարիսեցիներ, որ կը կառուցանէք մարգարէներուն տապանները եւ կը զարդարէք արդարներուն գերեզմանները, ու կ'ըսէք. “Եթէ մեր հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ կամակից չէինք ըլլար մարգարէներուն արիւնին թափուելուն”: Հետեւաբար դո՛ւք կը վկայէք ձեր մասին, թէ որդիներն էք անո՛նց՝ որ կը սպաննէին մարգարէները: Ուստի դո՛ւք ալ ձեր հայրերուն չափը լեցուցէք: Օձեր, իժերո՛ւ ծնունդներ, ի՞նչպէս պիտի խուսափիք գեհենի դատապարտութենէն:



Proud Pharisee

Ուստի ահա՛ ես կը դրկեմ ձեզի մարգարէներ եւ իմաստուններ ու դպիրներ: Անոնցմէ ոմանք պիտի սպաննէք եւ խաչէք, ոմանք ալ պիտի խարազանէք ձեր ժողովարաններուն մէջ ու հալածէք քաղաքէ քաղաք: Որպէսզի ձեր վրայ զայ երկրի վրայ թափուած ամբողջ արդար արիւնը, արդար Աբելի արիւնէն մինչեւ Բարաքիայի որդիին՝ Չաքարիայի արիւնը, որ սպաննեցիք տանարին եւ զոհասեղանին միջեւ: Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. “Այս բոլոր բաները պիտի զան այս սերունդին վրայ”»:

«Ո՛վ Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կը սպաննէիր մարգարէները ու կը քարկոծէիր քեզի դրկուածները. քանի՛ անգամ ուզեցի հաւաքել զաւակներդ, ինչպէս հաւը թելերուն տակ կը հաւաքէ իր ձագերը, բայց դուք չուզեցիք: Ահա՛ ձեր տունը ամայի պիտի մնայ ձեզի: Արդարեւ կ’ըսեմ ձեզի թէ ա՛յ ասկէ ետք պիտի չտեսնէք զիս՝ մինչեւ որ ըսէք. “Օրհնեա՛լ է ա՛ն՝ որ կու գայ Տէրոջ անունով”»:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 22:34-23:39

The Greatest Commandment

Hearing that Jesus had silenced the Sadducees, the Pharisees got together. One of them, an expert in the law, tested him with this question: “Teacher, which is the greatest commandment in the Law?”

Jesus replied: “ ‘Love the Lord your God with all your heart and with all your soul and with all your mind.’ ^a This is the first and greatest commandment. And the second is like it: ‘Love your neighbour as yourself.’ ^b All the Law and the Prophets hang on these two commandments.”

Whose Son Is the Messiah?

While the Pharisees were gathered together, Jesus asked them, “What do you think about the Messiah? Whose son is he?”

“The son of David,” they replied.

He said to them, “How is it then that David, speaking by the Spirit, calls him ‘Lord’? For he says,

“ ‘The Lord said to my Lord:

“Sit at my right hand until I put your enemies under your feet.” ’ ^c

If then David calls him ‘Lord,’ how can he be his son?” No one could say a word in reply, and from that day on no one dared to ask him any more questions.

A Warning Against Hypocrisy

Then Jesus said to the crowds and to his disciples: “The teachers of the law and the Pharisees sit in Moses’ seat. So you must be careful to do everything they tell you. But do not do what they do, for they do not practice what they preach. They tie up heavy, cumbersome loads and put them on other people’s shoulders, but they themselves are not willing to lift a finger to move them.

“Everything they do is done for people to see: They make their phylacteries ^a wide and the tassels on their garments long; they love the place of honour at banquets and the most important seats in the synagogues; they love to be greeted with respect in the marketplaces and to be called ‘Rabbi’ by others.

“But you are not to be called ‘Rabbi,’ for you have one Teacher, and you are all brothers. And do not call anyone on earth ‘father,’ for you have one Father, and he is in heaven. Nor are you to be called instructors, for you have one Instructor, the Messiah. The greatest among you will be your servant. For those who exalt themselves will be humbled, and those who humble themselves will be exalted.

Seven Woes on the Teachers of the Law and the Pharisees

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You shut the door of the kingdom of heaven in people’s faces. You yourselves do not enter, nor will you let those enter who are trying to. ^b

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You travel over land and sea to win a single convert, and when you have succeeded, you make them twice as much a child of hell as you are.

“Woe to you, blind guides! You say, ‘If anyone swears by the temple, it means nothing; but anyone who swears by the gold of the temple is bound by that oath.’ You blind fools! Which is greater: the gold, or the temple that makes the gold sacred? You also say, ‘If anyone swears by the altar, it means nothing; but anyone who swears by the gift on the altar is bound by that oath.’ You blind men! Which is greater: the gift, or the altar that makes the gift sacred? Therefore, anyone who swears by the altar swears by it and by everything on it. And anyone who swears by the temple swears by it and by the one who dwells in it. And anyone who swears by heaven swears by God’s throne and by the one who sits on it.

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You give a tenth of your spices—mint, dill and cumin. But you have neglected the more important matters of the law—justice, mercy and faithfulness. You should have practiced the latter, without neglecting the former. You blind guides! You strain out a gnat but swallow a camel.

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You clean the outside of the cup and dish, but inside they are full of greed and self-indulgence. Blind Pharisee! First clean the inside of the cup and dish, and then the outside also will be clean.

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You are like whitewashed tombs, which look beautiful on the outside but on the inside are full of the bones of the dead and everything unclean. In the same way, on the outside you appear to people as righteous but on the inside you are full of hypocrisy and wickedness.

“Woe to you, teachers of the law and Pharisees, you hypocrites! You build tombs for the prophets and decorate the graves of the righteous. And you say, ‘If we had lived in the days of our ancestors, we would not have taken part with them in shedding the blood of the prophets.’ So you testify against yourselves that you are the descendants of those who murdered the prophets. Go ahead, then, and complete what your ancestors started!

“You snakes! You brood of vipers! How will you escape being condemned to hell? Therefore I am sending you prophets and sages and teachers. Some of them you will kill and crucify; others you will flog in your synagogues and pursue from town to town. And so upon you will come all the righteous blood that has been shed on earth, from the blood of righteous Abel to the blood of Zechariah son of Berekiah, whom you murdered between the temple and the altar. Truly I tell you, all this will come on this generation.

“Jerusalem, Jerusalem, you who kill the prophets and stone those sent to you, how often I have longed to gather your children together, as a hen gathers her chicks under her wings, and you were not willing. Look, your house is left to you desolate. For I tell you, you will not see me again until you say, ‘Blessed is he who comes in the name of the Lord.’”

Ս. Գրիգոր Լուսավորչի սուկալի չարչարանքների ու վիրապ մանելու հիշատակության օր

Այս տոնը հայոց առաջին հայրապետ Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակության երեք տոներից առաջինն է տարվա ընթացքում: Ըստ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու տոնացույցի՝ նշվում է Մեծ պահքի 6-րդ կիրակիի նախորդ շաբաթ օրը: Տոնը կատարվում է ի հիշատակություն Խոր Վիրապում Ս. Գրիգոր Լուսավորչի կրած չարչարանքների: Ըստ պատմական աղբյուրների՝ Ս. Գրիգոր Լուսավորչին Անակ Պարթև իշխանի որդին էր:

Սպանելով հայոց Արշակունի Խոսրով թագավորին, Անակ Պարթևը սպանվում է հայ իշխանների կողմից: Որդին՝ Գրիգորը, մեծանում և կրթություն է ստանում Կեսարիայում՝ դաստիարակվելով իբրև բարեպաշտ քրիստոնյա: Հետագայում դառնում է Խոսրով արքայի որդու՝ Տրդատ թագավորի արքունի դիվանապետը: Սակայն տեղեկանալով, որ Գրիգորը քրիստոնյա է, ինչպես նաև արքայասպան Անակի որդին, Տրդատ արքան նրան չարչարանքների է ենթարկում և նետում Խոր Վիրապի ստորգետնյա գնդանը: 4-րդ դարի Ընդհանրական Եկեղեցու սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված իր ներբողում գրել է. «Հիշեք և նրա համբերությունը խոր վիրապի մեջ, որքան էր նեղություններով դառնացած... Իսկ ո՞վ կարող է խոսքով պատմել երանելու անսահման ճգնության մասին, կամ օրինակով ցույց տալ նրա անտանելի նեղությունը, որ ապրում էր իծերի և քարբերի մեջ, որտեղ ոչ գրուցակից կար, ոչ վշտակցող բարեկամ, ոչ օգնական, ոչ մխիթարող և ոչ ծառայող: Նա համբերում էր մեծ ժուժկալությամբ, իբրև կենդանի դրված գերեզմանի մեջ, անտուն, մերկ, գիշեր-ցերեկ, ամռան շոգին և ձմռան սառնամանիքին, քանզի մոտ էր Աստծուն»:



Խոր վիրապում կրած 13 տարիների չարչարանքներից հետո Ս. Գրիգոր Լուսավորչը, դուրս գալով ստորգետնյա գնդանից, Քրիստոսի լույսն է տարածում հայոց աշխարհում՝ դառնալով պետականորեն ճանաչված Հայ եկեղեցու առաջին հովվապետը: Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը, իբրև համաքրիստոնեական սուրբ, տոնում են նաև քրիստոնյա մյուս եկեղեցիները:

Commemoration of St. Gregory the Illuminator's torments and commitment to the pit

This feast is the first one among the three commemoration days dedicated to the memory of St. Gregory the Illuminator, the first Catholicos of All Armenians. According to the Armenian Church Calendar, it is celebrated on the eve of the Fifth Sunday during the period of Great Lent. The feast is dedicated to the torments which St. Gregory suffered during his imprisonment.

According to historical sources, St. Gregory the Illuminator was the son of Anak Partev, a knight and nobleman, who killed the Armenian King Khosrov Arshakouni. In retaliation, Anak is executed by the Armenians. His son, Gregory, lived and studied in Caesarea, and was brought up as a pious Christian. Gregory returns to Armenia as an adult and becomes a member of the royal court. King Tiridates (Trdat), the son of King Khosrov and heir to the throne, appoints Gregory as the Chancellor of the Armenian Kingdom. Tiridates, learning that Gregory is a Christian and the son of Anak, subjects him to severe tortures and commits Gregory to death, by imprisoning him in a deep underground pit.

In 301 A.D., after spending 13 years in the pit, St. Gregory the Illuminator is freed from the dungeon and emerges to spread the Light of Christ in Armenia. He thus becomes the first pontiff of the Armenian Church, baptizes the royal family, and evangelizes the whole of the Armenian Nation. Armenia becomes the first nation in the world to officially proclaim Christianity as her state religion.

St. Gregory the Illuminator is recognized by all of Christendom as a Saint, and he is commemorated in all traditional Christian Churches.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Զգո՛յ՛ լոյ՛ք, չի՛նի թէ մէկը ձեզ գրաւի ճարտարամտութեամբ եւ սնոտի խաբէրայութեամբ. դրանք մարդկային աւանդութեան եւ բնութեան տարերային ուժերի վրայ են հիմնուած եւ ոչ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ» (Կող. 2:8):

Քրիստոսի Գալուստով փրկուած հարազատներ,

Եթէ մեզ հարցնեն՝ կուգենայի՞նք հէնց վաղը Փրկիչը գար, խուսափո՞ւմ, թէ հանդըրով ենք մտածում Քրիստոսի երկրորդ գալուստի, մեր պատասխանը իւրովի գնահատական կը լինէր մեր հոգեւոր վիճակի: Իսկապէս, լուրջ հարցադրում է՝ այօրուայ քիստոնեայ աշխարհը, ես, մենք, մեր համայնքը, պատրաստ ենք կամ գոնէ պատրաստու՞ւմ ենք այն գալուստին, որի մասին ամէն օր ենք խնդրում՝ ասելով. «Եկեսցէ արքայութիւն Քո»: Աստուածաշունչը աւարտում է հէնց նման խնդրանք-մաղթանքով, ուր սբ. Յովհաննէս առաքեալը գրում է. **«Ով այս մասին վկայէ, ասաց. "Ես գալիս եմ շուտով": Ամէն: Ե՛կ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս»** (Յայտն. 22.20):

«Ամէն»՝ «թող լինի» ասելով, առաքեալն իր համաձայնութիւնն է տալիս եւ անձնապէս դիմելով եկեղեցու անունից է դիմում՝ դաւանական խոստովանութեամբ՝ ե՛կ,

Քրիստոսասէ՛ր բարեկամներ, մենք Մեծ Պահքի ապաշխարութեան շրջանով պատրաստոււմ ենք Քրիստոսի հետ հանդիպմանը, մեծ իմաստով՝ Իր գալստեանը: Այս շրջանը խորհրդանշականօրէն մեր ողջ կեանքն է ներկայացնում, ուր կան Աստծուց մկրտուելու, օծումով որդեգրուելու եւ դրախտային ուրախութիւնն զգալու անուշ սկիզբ, եւ մեղքով անկում-արտաքսում, զոյջումով վերադարձ եւ աղօթական կազդուրում, ողորմութեամբ ու առաքինի կեանքով հաստատում եւ Շնորհի մէջ աճելու հրաւեր: Մեղքի դիմաց մահացող մարդը չէր կարող ապաշխարութեամբ նման վերադարձ ունենալ առանց Փրկիչ Քրիստոսի:

Շարաթ առ շարաթ Մեծ Պահքի ընթացքը մեզ հասունացնում է ապաշխարութեան այն հանգրուանին, ուր մենք, մաքրուելով բարու անունով մատուցուած մեղքի վարակից, կարող ենք լինում ինքնաքննութեան, ինքնահրաժարումի ճանապարհով վերագտնել մեր աստուածաստեղծ իրական «ես»-ը, վերականգնել Աստծոյ պատկերը մեր մէջ: Սա հեշտ չէ, ինչպէս փաստում են իրենց ներսում այս պայքարն անցած անձինք: Աւելի հեշտ է մեր անձից դուրս պայքարը, քան մեր անձի ներսում սիրելի դարձած մեր կրքերի ու չերեւացող մեղքերի դեմ:

Քրիստոսի՝ օրուայ օրինակելի հաւատացեալ ներկայացող օրէնսգէտներին, փարիսեցիներին եւ կրօնական առաջնորդներին ուղղուած «վայերը» միայն իրենց ուղղուած չեն, այլ նաեւ մեզ: Սա այնքանով է կարեւոր, որ հոգեւոր ուսուցիչների եւ հայրերի խօսքով ու օրինակով է Աստծոյ խօսքի գործադրումը արգելակւում կամ յաջողում: Օրինապաշտ հրէաների օրինակը մեզ սթափեցնող պիտի լինի, քանի որ հէնց նման հոգեւոր խեղաթիւրման պատճառով իրենց հոգեւոր աչքերը չը կարողացան Յիսուսի կերպարի մէջ ճանաչել եւ ընդունել երկար սպասուած Մեսիային՝ Քրիստոսին:

Պօղոս առաքեալի զգուշացնող կոչն էլ նոյն մտքով է, որ ճարտար խօսքերով, մարդկային աւանդութեան՝ գիտականութեան պաշտամունքով, պերճախօս քարոզչութիւններով մեր ուշադրութիւնը որեւէ մէկը չը կարողանայ շեղել Քրիստոսից: Մեզ առաջարկւում են փրկութիւններ գիտութեանապաշտութեամբ, սոցիալական շարժումներով, բժշկական միջամտութիւններով, տնտեսական ու քաղաքական տեսութիւններով: Այսօրուայ զանազան գիտական դպրոցներն էլ մարդկային աւանդութեան վրայ ենք հիմնուած, իսկ ճարտասան լեզուն կարող է դատարկը, խաբկանքը ճշմարտութեան անունով ներկայացնել: Մեզ համար յստակ պիտի լինի չափորոշիչը. մեզ մատուցուածը ճշմարտութիւն կարող է լինել, եթէ հիմնուած են դրանք միակ Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ վարդապետութեան վրայ:

Աստուած մեզ ուղղափառ հաւատքի, առաքինի կեանքի, բարի գործերի եւ Իր հետ Սուրբ Հաղորդութեան մէջ պահի եւ աճեցնի՝ արժանաւոր կերպով գնահատելու Իր առաջին խոնարհ գալուստը եւ պատրաստուելու Իր երկրորդ ու փառաւոր գալուստին: Ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Գալստյան կիրակի

Մեծ Պահքի վեցերորդ կիրակին կոչվում է Գալստյան: Այս կիրակին Հիսուս Քրիստոսի Առաջին Գալստյան՝ մարդեղության հիշեցումն է: Հաստատվեց այն ճշմարտությունը, որ Փրկչի Գալստյամբ հնարավորություն ընձեռնվեց մարդկությանն առաջնորդվել փրկության ուղով:

Այս կիրակին միևնույն ժամանակ Երկրորդ Գալստյան խորհուրդն ունի: Ավետարաններում և առաքյալների թղթերում Երկրորդ Գալստյանը նվիրված բազում հատվածներ կան: Տերը զգուշացնում է Երկրորդ Գալստյան և դրա նախանշանների մասին. «Չգուշ եղեք, գուցե մեկը ձեզ խաբի, որովհետև շատերը կգան իմ անունով ու կասեն, թե՛ ես եմ Քրիստոսը. և շատերին կմոլորեցնեն: Լսելու եք պատերազմների ձայներ և պատերազմների լուրեր... Ազգ ազգի դեմ պիտի ելնի, և թագավորությունը՝ թագավորության դեմ, և պիտի լինեն սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժեր: Սակայն այս ամենը սկիզբն է երկանց ... Եվ բազում սուտ մարգարեներ պիտի ելնեն ու շատերին պիտի մոլորեցնեն: Եվ անօրինության շատանալուց՝ շատերի սերը պիտի ցամաքի: Բայց ով մինչև վերջ համբերեց, նա պիտի փրկվի» (Մատթ. 24:4-13):

Գալստյան կիրակիի խորհուրդը համբերության, բարեպաշտության, առաքինության կոչն է, որովհետև հոգու բյուրեղացմամբ և ճշմարիտ հավատով մարդ կարող է սպասել Տիրոջ Հրաշափառ Գալստյանը:

Sunday of Advent

The Sixth Sunday of Great Lent is called the Sunday of Advent. This Sunday teaches us about the first Advent of Christ – His Incarnation: His Holy Birth when God became Man. This proved the Truth found in the Scriptures that by the coming of the Saviour, a second chance was given to mankind to be guided on the path leading towards salvation.

This Sunday also symbolizes the Second Advent. In the Gospels and Apostolic Letters there are many references dedicated to the Second Advent, where our Lord warns us about His return. In the Gospel of St. Matthew, Christ says, “...Watch out and do not let anyone fool you. Many men, claiming to speak for me, will come and say, “I am the Messiah!” and they will fool many people. You are going to hear the noise of battles close by and the news of battles far away... Countries will fight each other; kingdoms will attack one another. There will be famines and earthquakes everywhere... And you will be hated by all nations for my Name’s sake... Many false prophets will appear and fool many people. Such will be the spread of evil that many people’s love will grow cold. But whoever holds out to the end will be saved” (Mt 24:4-13).

The message of this Sunday is a call for endurance, piety and modesty. Through these we can patiently wait for the Glorious Resurrection of Christ, the purification of our souls and the triumph of the True Faith. All Christian Churches celebrate the feast of the Sunday of Advent.

Անցյալը, ներկան, թե՛ ապագան

Մի անգամ երեք իմաստուն վիճեցին, թե որն է մարդու համար ավելի կարևոր՝ անցյալը, ներկան, թե՛ ապագան:

Նրանցից մեկն ասաց.

- Անցյալն է մարդուն դարձնում այն, ինչ նա ներկայում կա: Իր բոլոր հմնությունները նա ձեռք է բերում անցյալից:

- Համաձայն չեմ,- բացականչեց մյուսը,- ապագան է մարդուն ձևավորում: Ինչպիսի կարողություններով և գիտելիքներով ես օժտված լինեմ այսօր, ապագայի պահանջով նորերը ձեռք կբերեմ: Իմ արարքները թելադրված այն ձգտումով, թե ես ինչ եմ ուզում դառնալ:

- Դուք բացթողցիք այն փաստը,- միջամտեց երրորդը,- որ անցյալը և ապագան գոյություն ունեն միայն մեր գիտակցության մեջ: Անցյալն այլևս չկա: Ապագան դեռ չկա: Սակայն, յուրաքանչյուր արարք դուք ներկայում եք գործում և միայն ներկայում: Եվ միայն այսօրն է որոշում, թե ինչպես մուտք կգործեք ապագա և արդյո՞ք այն չի դառնա վերջնակետը ձեր անցյալի:

Մի՛ անտեսեք ձեր այսօրվա օրը, որից այնքան բան է կախված:

Ռուսերենից թարգմանեց Աննա Սահակյանը

4: Հոգեհանգիստ - Memorial Service

No Memorial Service Request This Week

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.